ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 09 մարտի 2023թ.

2023 թվականի փետրվարի 21-ից մինչև մարտի 07-ը ներառյալ Բյուրեղավանի համայնքապետարանը կազմակերպել է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2022 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ հանրային քննարկումներ:

Հանրային քննարկումների մասին հրավերը հրապարակվել է Բյուրեղավանի համայնքապետարանի պաշտոնական էլեկտրոնային կայքում՝ (տես՝ https://byureghavan-kotayk.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=a100a0e1-8de7-4a85-a36b-e9175ed0da87 հղումով), ֆեյսբուքյան էջում, ինչպես նաև փակցվել էր Բյուրեղավանի համայնքապետարանում, ՀՈԱԿ-ներում, Նուռնուս և Ջրաբեր բնակավայրերում առկա ցուցատախտակներին:

Օրակարգում՝

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու՝

1. «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2022 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ հանրային քննարկումներ:

Փետրվարի 21-ից մինչև մարտի 07-ը ներառյալ էլեկտրոնային եղանակով կայացած քննարկումների ընթացքում ներկայացված նախագծերի վերաբերյալ շահագրգիռ անձանց կողմից առաջարկություններ և կարծիքներ չեղան:

Որոշեցին՝

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2022 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» որոշման նախագծին հավանություն տալ և գնահատել դրական:

Քննարկումների պատասխանատու և վարող՝
Բյուրեղավան համայնքի ղեկավար՝ Հ. Բալասյան

Նուռնուս բնակավայրի վարչական ղեկավար՝ Մ. Գևորգյան

Արձանագրող՝ Բյուրեղավանի համայնքապետարանի
աշխատակազմի քարտուղար՝ Լ. Ավուշյան